Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 փետրվարի, 2016 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ եկեալ ի միտս իւր...»
(Ղուկ. ԺԵ. 17):

Սիրելի՛ հավատացյալներ,

Միտքը, բանականությունը Աստծուց տրված մեծագույն պարգեւ է, իսկ ընտրելու կարողությունը, որոշում կայացնելու ունակությունը արարածին Մարդ դարձնող այն հատկանիշներն են, որոնցով Արարիչը ձրիաբար օժտել է Ադամին, օրհնել նրան եւ երկիրը լցնելու ու նրան տիրելու պատվիրան տվել (հմմտ. Ծնն. Ա. 27):

Բայց, սիրելինե՛ր, այն չարաշահելը հատուկ է մեզ՝ աղամորդիներիս: Ընտրեցինք չարն ու բարին տարբերելը, որոշեցինք բարձրանալ, հասնել երկինք՝ Աստծուն: Եւ ամեն անգամ ողորմած Տերը, գթալով Իր իսկ ստեղծած մարդուն, ներում է շնորհում եւ կրկին ընդունում նրան, քանզի, ինչպես առաքյալն է ասում, Աստված կամենում է, *«որ մարդիկ փրկվեն եւ հասնեն ճշմարտության գիտությանը»* (Ա. Տիմ. Բ. 4):

Աստվածաշունչն ամբողջությամբ՝ Հնից մինչեւ Նոր Կտակարանները, մարդկության փրկության միջոցն ու ճանապարհն է ցուցանում: Այն մեզ տալիս է նաեւ մարդկային հոգիների վերածննդի, կերպարանափոխության եւ փրկության հրաշալի օրինակներ. Դավիթ, Սողոմոն, Մանասե, Պետրոս, Պողոս, մաքսավոր, ավազակ, անառակ որդի եւ այլք, ովքեր *«եկեալ ի միտս»* փրկվել, արդարացել են հավատքով, զղջումով եւ ապաշխարությամբ: Ապաշխարությունը, որպես հոգեւոր գիտակցության սրբագրման անհրաժեշտություն, սուրբգրային հիմնավորում ունի: Ապաշ-

խարություն են քարոզել մարգարեները, ապաշխարության կոչով են իրենց քարոզչությունն սկսել Հովհաննես Մկրտիչը եւ մեր Տեր Հիսուս Քրիստոս: Նույնն էին պահանջում առաքյալներն ու սուրբ հայրերը. *«Տերը չի ուզում, որ որեւէ մեկը կորստյան մատնվի, այլ ուզում է, որ ամենքը ապաշխարեն»* (Բ. Պետ. Գ. 9):

Զղջումն ու ապաշխարությունը հոգեպես աճող անհատի ապրումներն են, որ գիտակցում է սեփական վարքի ու բարքի անարժանությունը, որի հետեւանքը անկումը կարող է լինել: Մեղավորության, անզորության գիտակցումը ծնում է խղճի խայթ, մեղավորն ինքն է դառնում իր բարոյական դատավորը: Զղջման, խղճի ձայնին դիմելու եւ լսելու գործընթացը բարոյական ինքնորոշման երկար ու դժվարին ուղին է: Այն հանգիստ չի տալիս եւ ստիպում է մեղավորին գործել:

Այսպիսի խորը զգացում, սթափություն, զղջում է ապրում անկախ ապրելու ցանկությամբ տոգորված որդին, ով դեռեւս կենդանի հորից համառորեն պահանջելով իրեն հասանելիք ժառանգությունը՝ հեռանում, վատնում է ամեն ինչ, կյանքի սանդարամետում հայտնվելուց հետո միայն «խելքի գալով»՝ բռնում տունդարձի ճանապարհը: Իրական կյանքի, մարդկային կենսակերպի ինչպիսի՜ պատկերումներ են այն չքնաղ, գեղեցիկ նախընթաց առակները, որոնցով Հիսուս ընկալելի է դարձնում Իր խոսքի խորությունը, Իր քարոզների պարզ բովանդակությունը: Կորած ոչխարի եւ դրամի գտնվելը անհուն ուրախություն է պատճառում գտնողներին, եւ այդ ապրումը, թերեւս, ունկնդիրներին հասու պիտի դարձներ երկնքի եւ հրեշտակների ուրախությունը մեկ ապաշխարողի համար:

«Անառակ» ածականով պիտակավորված որդին վատ օրինակ է դառնում ոչ միայն իր ցոփ ու շվայտ կյանքի պատճառով: Նա ծանոթ չէր կյանքի դժվարություններին, կյանքի դառնությունը չէր ճաշակել երբեք: Անհուն խնդությամբ մտավ օտար ընդարձակ աշխարհը: Այնտեղ հայր չկար, որ ասեր՝ «մի՛ արա», չկար զսպող հասարակություն, որ գոչեր՝ «ամոթ է», ոչ էլ թերեւս կրոն, որ քարոզեր՝ «մեղք է»: Նա չէր սովորել երբեւէ իր հացը վաստակել: Նրա կործանումն սկսեց այնժամ, երբ որոշեց հեռանալ հոր տնից՝ մեղանչումից հասնելով մեղսագործության: Առակը ունկնդրեցինք ամենքս: Վստահ եմ՝ շատերիս սիրտը շարժեց այն: Խղճահարությունը հատուկ է մարդուն: Անօթեւան, ցնցոտիավոր, սովալլուկ մարդու ոսկրացած ձեռքը գութ եւ ողորմածություն է ծնում անգամ խստասիրտ անցորդի, անտարբեր մարդու մեջ... էլ ո՞ւր մնաց ծնողի: Սակայն օգնելը, օգնության ձեռք մեկնելը բնորոշ է ոչ բոլորին:

Ինչպես տեսանք՝ ծանր, դժվարին օրերը, ցավը, սովն ու ամոթը սթափության են տանում եւ անառակությամբ ապրուստը վատնած զավակի սրտում ծնողի առաջ մեղավորության զգացում ծնում՝ մղելով կյանքը փոխելու։ Միայնությունը սահմռկեցուցիչ է. այն սպանում է ներքուստ, եթե դատարկությունը չլցվեր հոգեպարար իրողություններով՝ սեր, Աստված, ընտանեկան հարկ, բարեկամներ։ *«Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո»* (Ղուկ. ԺԵ. 21). անկեղծ, ճշմարիտ խոստովանությունը, սխալի գիտակցումը, զգալն ու ընդունելը ներքին սխրանք է, որին ի պատասխան՝ ինչպես հայրը, այնպես եւ Հայր Աստված գրկաբաց ընդունում է մեղավորին եւ արժանացնում նրան նախկին իշխանական պատիվներին։

Ներողամտությունը հզոր առաքինություն է, դրա ամբողջական գիտակցումը եւ արտահայտումը՝ մեծություն։ Անհնար է ամբողջությամբ ըմբռնել, ընկալել, միաժամանակ արտահայտել ներողամտության տարողությունը, եթե չկա սիրով օծուն ներքին վստահություն, հույս եւ հավատ։

Այդպիսին է հայրը՝ սիրող ծնողը, ով լռելյայն, սիրասուն զավակի դառն խոսքերով, ժամանակից շուտ մահն աչքին առած, բաժանում է հարստությունը եւ սպասող հայացքը տունդարձի ճամփին մշտապես պահելով՝ ապրում իր ամեն օրը՝ աղոթելով ու հավատալով, որ զավակը «խելքի կգա»։

Եւ նա եկավ։ Չհուսահատվեց։ Հակառակ իր ավագ եղբոր սպասումի, ինչու ոչ, նաեւ ցանկության՝ վերադարձավ հայրական տուն։ Բոկոտն, ցնցոտիավոր, անոթի, ամոթահար, մեղավորության ամբողջական գիտակցմամբ, սեփական անձի ցածրությունն ընդունած եւ ինքնաքննությամբ զղջումի փրկարար ուղին բռնած, որը մարդուն հաստատում է խոնարհության մեջ։

Այդ զղջումը, որ ունեցավ անառակ որդին, ինքնաբեր գործողություն կամ տարերային ընթացք չէ, այլ՝ հոգեւոր եւ հոգեբանական լարում, ինչպես նաեւ ներքին պայքար պահանջող ճիգ։ Անձնական փորձով մարդ գիտակցում է սեփական հոգեւոր-բարոյական վիճակի ցածրությունը, ստորությունն ու անհրաժեշտություն զգում դրանից ազատվելու եւ փրկվելու։ Այսպիսի հոգեվիճակը միայն կարող է մեղավորի հոգեւոր նորացման նախապայման լինել։

Մինչ դատապարտելի արարքի համար մեղավորության գիտակցումը կրտսեր որդու մեջ ծնեց զղջում եւ ապաշխարությամբ դեպի հայրը գնալու մղում՝ ավագ եղբայրը, օրինապաշտությամբ կարծրացած սրտով, հորից ետ կանգնեց ու հանդիմանական խոսքեր ասաց։ Ցավալի եւ սրտաճմլիկ տեսարան։ Սիրող հայրը այդ պահին գտավ կորուսյալ իր զավակին եւ ուրախություն ապրեց՝ միաժամանակ կորցնելով մյուսին։ Եւ կրկին

կորստյան ցավալի եւ սրտաճմլիկ ապրում ունեցավ, սակայն չվհատվեց։ Նույն վստահությամբ նա ակնկալում էր, որ իր ավագ զավակը եւս, զայրույթի րոպեական ընկճումի պահը հաղթահարելով, պետք է հասկանար. այն եղբայրը, որ մեռած էր՝ կենդանացավ, կորսված էր՝ գտնվեց, ու պիտի մտներ տուն եւ ուրախակից լիներ թե՛ իր ծնողին, թե՛ դարձի եկած եղբորը։

Այս առակը, սիրելի՛ հավատացյալներ, կարող է եւ մեր կյանքի պատմությունը լինել։ Մեր մեջ էլ, վստահաբար, կան մարդիկ, որ կյանքի ինչ-որ փուլում երկնավոր մեր Հորից՝ Աստծուց հեռու ազատություն են փնտրել, սայթաքել, սխալվել, կորցրել երբեմնի կեղծ ընկերներին։ Դրախտից արտաքսված՝ ամենքս էլ կարող ենք հայտնվել անառակ որդիների, անիրավ տնտեսների եւ դատավորների փոխարեն։ Նրանք հասարակության մեջ իրենց դիրքով, կենսակերպով ու գործերով թեեւ տարբեր էին, սակայն մարդկանց հետ իրենց հարաբերություններում նման էին։ Ավելին՝ նրանց վերաբերվող տիրապատում առակներում շեշտվում է մի հանգամանք. նրանք իրենց կյանքի ինչ-որ դրվագում սթափվեցին, «խելքի եկան», զղջացին, կանգնեցին դարձի, տունդարձի ճանապարհին։ Ամենակարեւորը սեփական ընթացքի սխալականությունը գիտակցելը եւ քաջաբար խոստովանելն է, դրանից հրաժարվելը։ Դա, թերեւս, արդեն ոչ թե հասունության, այլ կյանքի ընկալման որակի փոփոխության մասին է վկայում. լավագույն օրինակը, որ ուսուցանում է մեզ այսօրվա առակը։

Աստված սպասում է մեզ, հավատացե՛ք, սիրելինե՛ր, սպասում է մեր դարձին, եւ նրանք, ովքեր կդառնան դեպի երկնավոր Տերը, անշուշտ, կլսեն Փրկչի մխիթարական խոսքերը՝ «եկայք առ Իս»։ Ուրեմն՝ դառնանք մեր նախահայրերի հավատավոր կյանքին, զղջումով եւ ապաշխարությամբ վերադառնանք մեր ներողամիտ ծնողների գիրկը։ Չմոռանանք՝ հայրական սերը երբեք չի մարում, հայրական տան դռները միշտ բաց են լինելու մեր առջեւ, եւ շտապենք Ս. Գրիգոր Նարեկացու հետ կրկնել զղջումով եւ ապաշխարությամբ.

«Անառակ որդու հետ ամոթապարտ եւ ես
Հայրենի գութիդ վերադառնալով՝ թախանձում եմ Քեզ...
Ընդունիր սովյալ տարագրականիս եւ հանցապարտիս,
Եւ նեղվածիս ու նվաղածիս տանջող ցավը քաղցի
Կենաց Քո հացով դարմանիր Դու...
Ընդառաջիր ինձ Քո ողորմությամբ,
քանզի ես նախ Քեզ եմ ապավինել...
Քեզ փառք ընդ Նմին, Հայր ողորմության,
Հավիտյանս. ամեն» (Բան ԽԷ.)։